ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

I

Ազատաբաղձ ժողովուրդները տասնամյակների հեռավորությունից սիրով ու ակնածանքով են հիշում 1945-ի մայիսի 9-ը՝ մեծ հաղթանակի օրը, երբ արևմուտքում լռեց վերջին համազարկը, խլացավ վերջին արկի պայթյունը և Ռայխստագի վրա ծփաց մեծ հաղթանակի դրոշը։ Այդ անմահ սխրանքը երբեք չի խամրի։

Սովետական մարդիկ սրբությամբ են հարգում բոլոր նրանց հիշատակը, ովքեր զոհվեցին մեր հայրենիքի ազատության ու անկախության համար մղած մարտերում՝ հանուն քաղաքակրթության փրկության։ Պատշաճն է տրվում մեծ Հայրենականի մասնակիցներին՝ վետերաններին, որոնք հաղթականորեն վերադարձան և լծվեցին խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, հզորացրին մեր մեծ հայրենիքը։ Անհուն երախտագիտությամբ ու հպարտությամբ ենք հիշում կենաց ու մահու քառամյա դաժան պատերազմի հոի ու բոցեռի միջով անցած այն բոլոր ռազմիկներին, որոնք իրենց անօրինակ սխրանքներով, լեգենդար արիությամբ խորհրդանշեցին սովետական բազմազգ ժողովրդի բարոյական ու մարտական վսեմ ոգին, սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հզոր ու անսասան ուժը։

Այսօր, ինչպես և երեկ, բովանդակ մարդկության ճակատագրի համար իրենց այժմեականությունը պահպանել են պատմական մեծ ճակատամարտերի հանրագումարներն ու դասերը։ Պատմության դասերը չեն մոռացվում։ Մեծ Հայրենականը և՛ պատմություն է, և՛ արդիականություն։ Պատմություն է, քանի որ այն մեր մարտական-հերոսական կենսագրությունն է, մեր փառավոր անցյալը. արդիականություն է, քանի որ նրա անանց դասերը օգնում են մեզ ամրապնդելու մեր հայրենիքի ռազմատնտեսական, քաղաքական և միջազգային դիրքերը, պայքարելու պատերազմի դեմ՝ հանուն խաղաղության։ «Դիմելով անցած պատերազմի իրադարձություններին,— Թորգաուի հանդիպման մասնակիցներին ուղարկած ուղերձում գրել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը,— մենք խոսում ենք ներկայի մասին և, իհարկե, մտածում ապագայի մասին՝ արդարացի և կայուն խաղաղության, միջուկային սպառնալիքից ժողովուրդներին փրկելու մասին» («Սովետական Հայաստան», 25 ապրիլի 1985 թ.)։

Երբ 1941 թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց ՍՍՀՄ-ի վրա, սովետական բազմազգ ժողովուրդները մեկ մարդու նման պայքարի ելան ընդդեմ ֆաշիզմի։ Պատերազմի առաջին իսկ օրից հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանի աշխատավորները հաստատապես իրենց մարտական տեղը գրավեցին մեր հայրենիքի ազատության և անկախության համար ՍՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում։

Գոտեմարտը ծանր էր։ Սև ծովից մինչև Սպիտակ ծովը ձգվող վիթխարի ռազմաճակատը օր ու գիշեր շնչում էր վառոդի ու արյան շնչով։ Ֆաշիստական Գերմանիան միանգամից ՍՍՀՄ-ի դեմ էր հանել 190 դիվիզիա, հինգ և կես միլիոն զինավառ ուժ, 4300 տանկ, 47,2 հազար հրանոթ, ականանետներ, 4980 մարտական ինքնաթիռ։ Ռազմաճակատում այդ ժամանակ թշնամին 3—4 անգամ գերազանցում էր մեր ուժերին։ Ֆաշիստական դարշնագույն հեղեղը առաջ

էր սողում՝ հրի ու սրի մատնելով սովետական քաղաքներն ու գյուղերը։ Եղան օրհասական պահեր, երբ թշնամին բախեց Մոսկվայի դարպասները, օղակեց Լենինգրադը, սպառնաց խուժել հեղափոխության սրբազան օրրանը, երբ հասնելով Վոլգային՝ Ստալինգրադին, փորձեց ոստնել և քայլել դեպի Ուրալ, մտնել Անդրկովկաս։ Բայց թշնամին հաշվի չէր առել սովետական ժողովրդի բարոյական վիթխարի ուժը, նրան անհայտ էր այն զորությունը, որ կա սովետական հայրենասիրության և ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության խորունկ ծալքերում։

Պատերազմի առաջին իսկ օրից մինչև նրա հաղթական ավարտը Սովետական Հայաստանը մարտնչում էր թշնամու դեմ։ Հայ զինվորը իր բազմադեղբայրների, ավագ եղբոր՝ ռուս քաջարի զինվորի հետ միասին ոտքի ելավ պաշտպանելու երկիր Հայրենին։ Հայ ժողովուրդը լավ գիտեր, թե ինչ է բերում իր հետ դաժան պատերազմը։ Նրա սրտում դեռ թարմ էր առաջին համաշխարհային պատերազմի ծանր վերքը, որ բացվել էր իր մեկուկես միլիոն զավակների եղեռնական կորստով։ Հայ ժողովուրդը գիտեր, որ այդ նույն գերմանական իմպերիալիզմի դիվանագիտական տմարդի խաղերով ու նրա անմիջական մասնակցությամբ էր նյութվել XX դարի առաջին մեծ ցեղասպանությունը, գիտեր, որ ֆաշիզմը գալիս է խլելու այն ամենը, ինչ պարգևել էր իրեն մեծ Հոկտեմբերը, այն ամենը, ինչ տվել էր կոմունիստական կուսակցության լենինյան ազգային իմաստուն քաղաքականությունը։ Հայաստանցին, ինչպես միշտ, իր նվիրական հանապատության սահմանը համարում էր ոչ միայն Արաքսը, այլև բոլոր այն վայրերը, որտեղով անցնում են Սովետական Միության սահմանագիծը։ Սովետական Հայաստանի աշխատավորները, ՍՍՀՄ ժողովուրդների հետ միասին, պատերազմի ելան՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով։ Հայ ժողովրդի զավակները ամենուրեք էին՝ ցամաքում, ծովում, օդում, այնտեղ, ուր Հայրենիքը իր որդիների կամքի, համառության և խիզախության, տաղանդի ու գիտելիքների պահանջն էր զգում։ Հայ ռազմիկները իրենց տոկունությամբ ու քաջագործություններով աչքի են ընկել բոլոր ռազմաճակատներում՝ Կովկասյան ու Կարպատյան լեռներում, Բրեստի ամրոցի պաշտպանության հերոսական էպոպեայում, Օդեսայի և Սևաստոպոլի ծովային ճակատամարտերում, Մոսկվայի մատույցներում, Լենինգրադի ու Ստալինգրադի պատերի տակ, Նովոռոսիյսկի մոտ՝ «Մալայա զեմլյա»-ում, Կերչում, Օրյոլ-Կուրսկի աղեղում, Դնեպրի վրա մղած վիթխարի ճակատամարտերում։ Հիրավի, չի եղել ռազմաճակատ, հերոս-քաղաք, ուր սովետական զորամասերի կազմում եղած չլինեն հայ ռազմիկներ և հրամանատարներ։ Նրանք սրբությամբ էին կատարում զինվորական երդումը, ժողովրդի պատվիրանը՝ անխնա ոչնչացնել գերմանաֆաշիստական զավթիչներին, սովետական հողն ազատագրել ֆաշիստական աղտեղությունից։

Պատերազմի առաջին ծանր ամիսներին հարյուրավոր հայ ռազմիկներ մասնակցեցին Բրեստի ամրոցի պաշտպանությանը, ավելի քան 250 մարտիկներ Վլատանի պղնձարդյունաբերության և կոլտնտեսային դաշտերի նախկին աշխատողներ էին, որոնք զորակոչվել էին 1939—1940 թթ.։ Բրեստի մոտ համառ մարտեր էր մղում Հայաստանում հեղափոխական շարժումների ակտիվ մասնակից, հետագայում Սովետական Միության հերոս, գեներալ Ասքանազ Կարապետյանի ղեկավարած մոտոմեքենայացված գունդը։ 1941 թ. հուլիսին գեներալ Քրիստափոր Ալավերդյանի հրամանատարությամբ գործող դիվիզիան գտնվում էր Բրեստի ամրոցից հյուսիս-արևմուտք՝ Բուգ գետի ափին։ Վեցօրյա համառ մարտերից հետո զորամասն ընկնում է շրջապատման մեջ։ Խիզախ հրամանատարն ամեն ինչ անում է՝ անհավասար մարտում թշնամու գրոհները ետ շպրտելու համար։ Սվինամարտի ժամանակ Ալավերդյանը վիրավորվում է և գիտակցությունը կորցրած գերի ընկնում։ Ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում, մինչև մահ նա արիաբար գիմանում է գեստապոյականների խոշտանգումներին, ընդհատակյա աշխատանք ծավալում սովետական ռազմագերիների շրջանում։

Ռովնոյի մարզում խիզախաբար մարտնչում էին փոխգնդապետ Մուշեղ

Կարապետյանի հրամանատարությամբ գործող հեծյալները։ Գեներալ Աշոտ Սարգսյանի հրաձգային դիվիզիայի ռազմիկները 1941 թ. հունիսի 22-ին մարտերի մեջ մտան առևմտյան սահմանագլխին, մասնակցեցին Լվովի պաշտպանության համար մղված ահեղ կռիվներին։

Սովետական Ուկրաինայի և նրա մայրաքաղաք Կիևի պաշտպանների շարքերում աչքի ընկան հայ ժողովրդի բաղում զավակներ, այդ թվում՝ գնդապետ Հովհաննես Բաղրամյանը՝ հետագայում Սովետական Միության մարշալ, Սովետական Միության կրկնակի հերոս, գեներալ Միխայիլ Բարսեղովը, կապիտան Մաթևոս Մադաթյանը, Լևոն Դարբինյանը (հետագայում Սովետական Միության հերոս), ռմբակոծիչների էսկադրիլիայի հրամանատար Պատրիկ Դազազյանը։ Բալթիկայի երկնակամարում անմահ քաջագործություններ էր կատարում կապիտան Նելսոն Ստեփանյանը։ Լենինգրադի հերոսական պաշտպանության գործում աչքի ընկնող դեր խաղաց գեներալ Բենիամին Գալստյանը։

Մոսկվայի համար մղած ճակատամարտում աչքի ընկան շատ հայորդիներ, այդ թվում՝ պրոֆեսոր Հովհաննես Ալիբեկյանը, գեներալ-լեյտենանտ Միքայել Բարսեղովը, գեներալներ Իվան Վեքիլյանը, Ստեփան Գինոսյանը, Սարգիս և Հայկ Մարտիրոսյանները և շատ ուրիշներ։

1941 թ. աշնանը հիտլերականները Մոսկվայի ուղղությամբ կենտրոնացրել էին իրենց զինված ուժերի ավելի քան 40 տոկոսը, տանկերի երեք քառորդը, հրանոթների ու ականանետների կեսը, ինքնաթիռների մեկ երրորդը, ֆաշիստական բանակի ընտիր դիվիզիաները։ 1941 թ. նոյեմբերին 239-րդ Սիբիրյան մոտոհրաձգային դիվիզիան՝ Հայկ Մարտիրոսյանի հրամանատարությամբ, Հեռավոր Արևելքից փոխադրվեց Կույբիշև քաղաքը, նոյեմբերի 7-ին մասնակցեց զորահանդեսին, որն ընդունեցին Կույբիշև ժամանած ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Միխայիլ Կալինինը և Սովետական Միության մարշալ Կլիմենտ Վորոշիլովը։ Զորահանդեսից հետո խորհրդակցություն անցկացվեց դիվիզիայի հրամանատարական և քաղաքական անձնակազմի հետ, նոյեմբերի 11-ին դիվիզիան փոխադրվեց ռազմաճակատ, Նովոմոսկովսկ (Ստալինգորսկ), ուր դաժան մարտերի մեջ մտավ ֆաշիստական գերակշիռ ուժերի դեմ։ Անմահ սխրագործություններ կատարեցին դիվիզիայի քաջարի ռազմիկները՝ հրամանատարներն ու քաղաշխատողները, զինվորները, զենքի բոլոր տեսակի մարտիկները։ Նրանք հերոսական էջեր գրեցին Մոսկվայի պաշտպանության, մեծ Հայրենականի պատմության մեջ, փառքով պսակեցին իրենց մարտական դրոշները։

Գերմանական բանակի գեներալ Գուդերիանը հետագայում ստիպված էր իր «Զինվորի հուշերը» գրքում գրել, որ գերմանական զորամասերը չկարողացան դիմանալ Սիբիրյան դիվիզիայի սասսիկ ճնշմանը... գործը հասավ խուճապի, որն ընդգրկեց ռազմաճակատի՝ մինչև Բոգորոդեցկա հասնող հատվածը։ Այս խուճապը, որ ռուսական կամպանիայից սկսած առաջին անգամ էր առաջացել, լուրջ նախազգուշացում էր, ցույց տվեց, որ գերմանական հետևակը սպառել էր իր մարտունակությունը և դարձել արդեն մեծ ջանքեր դրսևորելու անընդունակ...

Մոսկվայի հերոսական պաշտպանության ակտիվ մասնակից. տանկային բանակի հրամանատար, գեներալ Դ. Դ. Լելյուշենկոյի հուշագրությունից իմանում ենք, որ դա հենց 239-րդ Սիբիրյան հրաձգային դիվիզիան էր, որը գեներալ Հայկ Մարտիրոսյանի հրամանատարությամբ «այնպիսի հզոր հարված հասցրեց, որ խուճապ ու շփոթություն առաջ բերեց թշնամու շարքերում»։ Այսպիսին է մեծահամբավ գեներալ Հայկ Մարտիրոսյանը, որը սովետական զորամասերին մարտերով առաջնորդել է մինչև Բեռլին, պատերազմից հետո շարունակել զինվորական ծառայությունը, եղել 89-րդ հայկական, հրաձգային Թամանյան դիվիզիայի հրամանատար։ Ներկայումս նա գլխավորում է պատերազմի վետերանների սովետական կոմիտեի Երևանի սեկցիայի աշխատանքը։

Մեծ Հայրենականի պատմության մեջ անմոռաց էջեր են գրել Սովետական Միության մարշալ, Սովետական Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանը, ՍՍՀՄ նավատորմի ծովակալ, Սովետական Միության հերոս, ակա-

դեմիկոս Հովհաննես Իսակովը, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Սովետական Միության հերոս Համազասպ Բաբաջանյանը. ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Խանփերյան), գեներալներ Սարգիս Մարտիրոսյանը, Նվեր Սաֆարյանը, Հայկ Թումանյանը, Իսահակ Գասպարյանը, Սերգեյ Գալաջյանը, Իվան Վեքիլյանը, Աշոտ Սարգսյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, գնդապետներ Սիմոն Զաքիյանը, Արտաշես Վասիլյանը և շատ ուրիշներ։ Անմահ սխրագործություն են կատարել Սովետական Միության հերոսներ Նելսոն Ստեփանյանը (կրկնակի հերոս), Սերգեյ Օհանյանը, Սամսոն Մկրտումյանը, Սերգեյ Բուռնաղյանը, Ռուբեն Հակոբյանը, Ղուկաս Մագոյանը, Աշոտ Ղազարյանը, Գեղեոն Միքայելյանը, Գրիգոր Հայրապետյանը, Լիպարիտ Իսրայելյանը և շատ ուրիշներ։

Մեծ Հայրենականի պատմության անմոռաց էջերից է Հարավային ռազմաճակատում, Դոնի Ռոստովի մատույցներում կոմունիստ Սերգեյ Օհանյանի հրետանային մարտկոցի կատարած սխրանքը։ Մարտկոցի ռազմիկները 1941-ի նոյեմբերի 17—18-ը ետ շպրտեցին ֆաշիստական գրոհները, ոչնչացրին թշնամու 30 տանկ, մեծ քանակությամբ կենդանի ուժ ու տեխնիկա, մինչև մահ ամուր մնացին իրենց մարտական բնագծերում։ Նրանք կասեցրին ֆոն Լվալդ Կլայստի տանկերի արշավանքը, փակեցին Ռոստովի ճանապարհը։

Մեծ Հայրենականում սովետական ռազմիկները մասսայական հերոսություն կատարեցին։ Պատերազմի տարիներին Սովետական Միության շքանշաններով պարգևատրվել են ավելի քան յոթ միլիոն մարդ, 11603 ռազմիկներ արժանացել են Սովետական Միության հերոսի բարձր կոչման։ Նրանք մեր հայրենիքի ավելի քան 100 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ են։ Ոչ լրիվ տվյալներով պատերազմին մասնակցել են շուրջ 500 հազար հայ ռազմիկներ, նրանցից շուրջ 80.000-ը պարգևատրվել են կառավարական շքանշաններով և մեդալներով։ Հայ և հայաստանցի ռազմիկներից 108-ին շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում, այդ թվում՝ անվեհեր օդաչու Նելսոն Ստեփանյանն արժանացել է կրկնակի հերոսի կոչման, 27-ը՝ Փառքի շքանշանի լրիվ ասպետներ են։ Ն. Ստեփանյանը մարտնչել է Օդեսայում, Կիևում, Սևաստոպոլում, Ղրիմում, Կովկասում, Լենինգրադում և Մերձբալթիկայում։ Պատերազմում նա ոչնչացրել է 27 ինքնաթիռ, 85 տանկ, 13 նավ, 600 ավտոմեքենա, հարյուրավոր թնդանոթներ, գնդացրային կետեր, ֆաշիստական մի քանի հազար զինվոր ու սպա։ Ռազմաճակատի տարբեր հատվածներում սովետական զորքերի մարտական գործողությունները գլխավորում էին շուրջ 70 հայ գեներալներ։

Սովետական ինտերնացիոնալ բանակի կազմում ստեղծված իրադրության շահերի թելադրանքով ստեղծվեցին նաև ազգային զորամասեր։ Անդրկովկասյան հանրապետություններում ձևավորվեց ազգային 19 դիվիզիա, որոնցից 12-ը մարտնչել են ռազմաճակատում։ Ձևավորվեցին 89-րդ 408-րդ, 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները և այլ զորամասեր։ Մինչ այդ գործում էր 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը պատերազմի առաջին օրերից մարտական առաջադրանք էր կատարում Իրանում, այնուհետև տեղափոխվեց ռազմաճակատ՝ աչքի ընկավ ստալինգրադյան դյուցազնամարտերում։ ՍՍՀՄ զինված ուժերի ժողկոմի հրամանով 1942-ի նոյեմբերին այն վերակազմվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի։ Ղրիմում է գործել 390-րդ հայկական դիվիզիան, իսկ 261-րդ դիվիզիան, որ ձևավորվել է 1942-ին՝ Սովետական Հայաստանում, պատերազմի ամբողջ ընթացքում աչալուրջ պաշտպանում էր սովետական պետական սահմանը թուրքական ներխուժման վտանգից և թարմ ուժեր էր ուղարկում ռազմաճակատ։ Սովետական Հայաստանում գործում էին Երևանի հրետանային N 17 և ռազմաօդային ուժերի հատուկ դպրոցները, որոնք կադրեր էին պատրաստում ՍՍՀՄ զինված ուժերի համար։ Շրջանավարտներից շատերը ռազմաճակատներում աչքի ընկան իրենց սխրանքներով։ 1941 թ. դեկտեմբերին գնդապետ Սիմոն Զաքիյանի հրամանատարությամբ կազմավորվեց 89-րդ հայկական դիվիզիան։ Մի քանի օրվա ընթացքում մոբիլիզացվեցին 1500 կոմու-

նիստ և հարյուրավոր կոմերիտականներ, որոնք դարձան նորաստեղծ դիվիզիայի առաջատար ուժը։

Հայկական զորամասերը աչքի ընկնող դեր են խաղացել Կովկասի պաշտպանության, Սովետական Ուկրաինայի ազատագրման, Ղրիմի համար մղած մարտերում։ 89-րդ հայկական հրաձգային դիվիզիային Թամանի ազատագրման համար ծավալված կռիվներում ցուցաբերած արիության համար շնորհվել է «Թամանյան» կոչումը, իսկ 409-րդ դիվիզիային Ուկրաինայում մղած մարտերում աչքի ընկնելու համար՝ «Կիրովոգրադյան»։ 89-րդ Թամանյան դիվիզիան, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ Կովկասյան նախալեռներից համառ մարտերով հասել է մինչև Բեռլին։ 1945-ի անմոռաց գարնանը շատ ու շատ հայեր, այդ թվում՝ Թամանցիներ, իրենց ինքնագիրն են թողել Ռայխստագի պատերին։ Թամանյան դիվիզիան մասնակցել է Թամանի և Ղրիմի, Վարշավայի և լեհական շատ քաղաքների ազատագրման համար մղած մարտերին, Օդերի գետանցին, Օդերի Ֆրանկֆուրտի դրավմանը, Բեռլինի ճակատամարտին։ Դիվիզիան երեք անգամ արժանացել է կառավարական բարձր պարգևի՝ Կարմիր դրոշի, Կուտուզովի երկրորդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանների։ Դիվիզիայի քաջարի ռազմիկներից Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը, Ջահան Կարախանյանը, Խորեն Խաչատրյանը, Սիմոն Բաղդասարյանը, Հրանտ Բաբայանը, Վարդգես Ռոստոմյանը, Հարություն Մկոտչյանը, Այդին Հարությունյանը արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման։ Պատերազմի ընթացքում Թամանյան դիվիզիան ոչնչացրել է թշնամու ավելի քան 9000 զինվոր ու սպա, խփել ու ոչնչացրել է 148 տանկ ու ինքնագնաց հրանոթ, ավելի քան 300 դաշտային հրանոթ, գերի է վերցրել 11 հազար ֆաշիստական զինվոր ու սպա։ Գրավել է ռազմավար՝ 154 տարբեր տրամաչափի հրանոթ, 383 գնդացիր, 5600 հրացան և ավտոմատ, 1160 ավտոմոբիլներ և այլն (Советская Армения в годы Великой Отечественной войны. Ереван, 1975, с. 621)։ Թամանցիների մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու, անձնական արիություն ու խիզախություն ցուցաբերելու համար գեներալ Նվեր Սաֆարյանը արժանացավ մեծ փառքի։ Հայկական Մատրոսովի՝ Հունան Ավետիսյանի քաջագործությունները հայտնի են բոլորին։ Այդ նա էր, որ 1943 թ. սեպտեմբերին Վերխնե Բականսկի շրջանում՝ Նովոռոսիյսկի մատույցները փակող Դոլգայա լեռան վրա թշնամու գնդացրային հրակնատը փակեց կրծքով, իր վրա ընդունելով մահաբեր գնդակները, ճանապարհ բացելով սովետական հարձակվող զորամասերի համար։

Պատերազմի ընթացքում ավելի քան 270 ռազմիկներ՝ այդ թվում 7 հայեր, կրկնել են Ալեքսանդր Մատրոսովի սխրանքը։ Դնեպրի անցմանը, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման համար մղած մարտերում աչքի ընկած ավելի քան 35 հայ ռազմիկներ արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման։ Նրանց մեջ էին դիվիզիայի հրամանատար, գեներալ Անդրանիկ Ղազարյանը, գնդի հրամանատար, գնդապետ Գնդեոն Միքայելյանը։ Սովետական Միության հերոսի կոչման են արժանացել Սովետական Հայաստանից քուրդ ժողովրդի զավակ Սամանդ Սիաբանդովը, ռուս Իվան Բոնդարևը, ադրբեջանցի Խզդիր Մուստաֆաևը, ասորի Սերգեյ Սարխոշևը։

Պատերազմի ժամանակ մեծ թվով հայ հայրենասերներ արիաբար մարտնչել են Բոյանսկի, Ղրիմի, Լենինգրադի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հյուսիսային Կովկասի պարտիզանների շարքերում, ընդհատակում։ Հայտնի են «Երիտասարդ գվարդիայի» հայ մասնակիցների՝ Ժորա Հարությունյանցի, Մայա Պեգլիվանովայի (Մարիամ Փահլևանյանի) քաջագործությունները։

Հայ ժողովրդի զավակները արիաբար կռվել են Ֆրանսիայի, Իտալիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Բալկանյան երկրների դիմադրական շարժման շարքերում, համակենտրոնացման ճամբարների ընդհատակյա կազմակերպություններում։ Խիզախության ու տոկունության հրաշալի օրինակ են տվել Ֆրանսիայում՝ կոմունիստ-բանաստեղծ Միսաք Մանուշյանը, Իտալիայում՝ Մկրտիչ Դաշտոյանը, Գևորգ Քոլոզյանը, Չեխոսլովակիայում՝ Ժրտեմ Պետրոսյանը։

Ռազմաճակատներում իրենց արիությամբ աչքի են ընկել հայ կանայք։ Բարի անուն են վաստակել եֆրեյտոր Սոնյա Սինոյանը, զենիթային մարտկոցի հեռաչափային ջոկատի հրամանատար Հասմիկ Թամազյանը, կրտսեր լեյտենանտ Արաքսյա Հարությունյանը, սերժանտ Հայկուշ Ավետյանը, բժշկական քույրեր Էմմա Հայրապետյանը, Գոհար Նազարյանը, Գոհար Հարությունյանը, Ելիզավետա Հովհաննիսյանը, բժշկական ծառայության լեյտենանտներ Օֆելյա Պետրոսյանը, Սոֆյա և Ռոզա Լալայանները, բժշկական ծառայության մայոր Ռոզա Ջանջուտովան և շատ ուրիշներ։

2

Պատերազմի ծանր օրերին Սովետական Հայաստանի աշխատավորները սլատվով կատարեցին իրենց հեղափոխական պարտքը մայր Հայրենիքի հանդեպ։ Հայ ժողովուրդը միահամուռ երդվեց բոլոր ուժերն ու միջոցները նվիրաբերել թշնամու ջախջախման համար։ Խաղաղ կյանքն ընդհատվեց։ Հայաստանը միանգամից դարձավ մարտական ճամբար։ Ամենուրեք կատարվում էր մոբիլիզացիա։ Հանրապետությունում ամբողջ աշխատանքը վերակառուցվեց պատերազմի շահերին համապատասխան։ Զուգահեռաբար ստեղծվեցին աշխարհազորային և կործանիչ գումարտակներ։ Զենքի տիրապետումը օրվա հրամայականն էր։ Միայն ռազմական ուսուցման մի հերթում ավելի քան 50 հազար մարդ ձեռք բերեց անհրաժեշտ ռազմական գիտելիքներ։ 1941 թ. երկրորդ կեսին հանրապետությունում պատրաստվեցին 17000 օդաչու, պարաշյուտիստ, տանկիստ, ռադիստ, 1500 բժշկական քույր, 1000 մոտոցիկլիստ և ավտովարորդ։ Հրացանն ու նռնակը հավասար տեղ գտան մուրճի ու զնդանի կողքին։ Հայաստանը մարտնչում էր։

Հայրենիքի պաշտպանության առաջամարտիկների շարքերում էին կոմունիստները։ 1941—1943 թթ. Հայաստանի կոմկուսը, բացի զինվորական պարտադիր ծառայության ենթականերից, մի քանի անգամ կուսակցական մոբիլիզացիա կատարեց՝ ռազմաճակատ ուղարկելով իր արժանավոր զավակներին։ Կոմունիստներին հետևեցին կոմերիտականները։ Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը՝ հավատարիմ հեղափոխական ավանդույթներին, կարմիր բանակ ուղարկեց ավելի քան 70 հազար անդամ, այդ թվում 20 հազար կամավոր։ Ամենուրեք տիրում էր երկաթյա կարգապահություն, բոցկլտում էր սովետական հայրենասիրության կրակը։ Թիկունքայինների անխոնջ աշխատանքով ստեղծվեց ռազմական ամուր էկոնոմիկա, արդյունաբերությունը լիովին փոխադրվեց ռազմական ռելսերի վրա։ Գործարաններն ու ֆաբրիկաները դարձան զինանոց։ Որակական նոր փոփոխություններ կատարվեցին հանրապետության արդյունաբերության մեջ։ Զարգացավ ինժեներատեխնիկական միտքը։ Կառուցվեցին ռազմական տասնյակ օբյեկտներ, հազարավոր կրակակետեր ու հակատանկային փոսեր, խրամատներ ու գետնափոր ուղիներ։

Նոր ուժով դրսևորվեց Հայաստանի բանվոր դասակարգի հեղափոխական գիտակցությունն ու հայրենասիրությունը։ Ալավերդու և Ղափանի հանքագործները, Երևանի Կիրովի անվան կաուչուկի և Կիրովականի Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատների քիմիագործները, Ջերժինսկու անվան մեքենաշինական գործարանի և «Արարատ» տրեստի ու այլ ձեռնարկությունների աշխատողները, երկաթուղայինները փառքով պսակեցին իրենց։ Կաուչուկի կոմբինատը նվաճեց ՍՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշը։ Յուրաքանչյուր թիկունքայինի նշանաբանը դարձավ օրական երկու-երեք արտադրական նորմայի կատարումը։ «Հավասարվել ռազմաճակատի գվարդիականներին» լոզունգը հրամանի ուժ ուներ։ Կոմունիստ, մեքենավար Ա. Խաչատրյանն արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման, իսկ ավագ մեքենավար Գ. Աբաջյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Հայաստանը ռազմաճակատին տալիս էր ականանետներ, ավտոռումբերի կորպուսներ, ականներ, ձեռքի և հակատանկային նռնակներ, պայթուցիկ նյութեր, ռազմական հանդերձանք։ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը յուրացրեց և թողարկեց շուրջ 300 տեսակի արտադրանք։ Լենինականի

տեքստիլ կոմբինատն արտադրեց 104 միլիոն մետր գործվածք, որից 62 միլիոն մետրը զինվորական հանդերձանքի համար։ Կիրովականը տվեց 81 հազար կիսամուշտակ և բաճկոն։ Կարի ձեռնարկությունները կարմիր բանակի կարիքների համար թողարկեցին 5 միլիոն 270 հազար զույգ սպիտակեղեն, 350 հազար կտոր զինվորական համազգեստ, 346 հազար շինել։ Կոշիկի ֆաբրիկաները տարեկան արտադրում էին մինչև 800 հազար զույգ կոշիկ։

Պատերազմի ժամանակ աշխատանքային արիության հիասքանչ օրինակ տվեցին հանրապետության կոլտնտեսային գյուղի աշխատավորները՝ կոլտնտեսականները, մեքենատրակտորային կայանների ու սովխոզների բանվորներն ու ինժեներատեխնիկական անձնակազմը։ Ռազմաճակատ մեկնածների փոխարեն դաշտային աշխատանքի ելան կանայք, պատանիներն ու ծերերը։ Ամենի ու տրակտորի ղեկի մոտ կանգնեցին պատանիները։ Նրանք քուն ու դադար չունեին, աշխատում էին հայրերի օրինակով, օգնում ռազմաճակատում հաղթանակի կոփմանը։

Կոլտնտեսային գյուղացիությունը պատերազմի ահեղ օրերին անգամ ընդարձակեց ցանքատարածությունը, բարձրացրեց տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերասվությունը։ Մրցում էին բոլորը։ Հեշտ ու դյուրին չէր նման պայմաններում հանրապետությունը սեփական հացով և սննդամթերքով ապահովելը։ Կոլտնտեսային գյուղացիությունը իր քրտնաթոր աշխատանքով հասավ դրան։ Պատերազմը մարտական ոգի հաղորդեց բոլորին։ Գյուղատնտեսության ավելի քան 500 աշխատողներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով։ Անասնապահական մթերքների պլանները հաջող կատարելու համար Հայկական ՍՍՀ-ն նվաճեց պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր դրոշը։

Մեծ է թիկունքում աշխատող սովետահայ մտավորականության՝ գիտնականների, գրողների, նկարիչների, արվեստի բնագավառի մյուս գործիչների ավանդը հայրենիքի պաշտպանության գործում։ Նրանք իրենց ամբողջ ավյունը՝ ստեղծագործական միտքն ու եռանդը նվիրաբերեցին արտադրության կատարելագործմանն ու ռազմական էկոնոմիկայի զարգացմանը, ռացիոնալիզատորական, գյուտարարական աշխատանքի ծավալմանը։ Աշխարհահռչակ աստրոֆիզիկոս, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը հայրենական կիրությունը հարստացրեց նոր հայտնագործությամբ, ստեղծեց պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որի համար արժանացավ պետական մրցանակի։ Այդ գյուտը կիրառական նշանակություն ստացավ երկրի պաշտպանական գործում։ Կոսմիկական ճառագայթների հետազոտման ասպարեզում ակնառու հաջողությունների հասան ակադեմիկոս Ալիխանյան եղբայրները։ 1943 թ. նոյեմբերին հիմք դրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային, որի առաջին պրեզիդենտը դարձավ Հովսեփ Օրբելին։ Ակադեմիայի առաջին կազմում կար 23 ակադեմիկոս։ 1947 թ. ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ ընտրվեց Վիկտոր Համբարձումյանը, որը մինչ այդ արդեն ստանձնել էր Բյուրականի նորաստեղծ աստղադիտարանի ղեկավարությունը և մինչև այսօր հանդիսանում է դրանց անփոփոխ ղեկավարը։

Մարտնչող սովետական ժողովրդին և ռազմիկներին հայրենասիրական նոր ստեղծագործություններով ոգեշնչեցին հայ գրողներն ու արվեստագետները։ Ավ. Իսահակյանն արժանացավ պետական մրցանակի, Դ. Դեմիրճյանը ստեղծեց «Վարդանանք», իսկ Ստ. Զորյանը՝ «Պապ թագավոր» պատմավեպերը։ Իրենց քաղաքացիական կորովաշունչ քնարը նոր ուժով հնչեցրին Ե. Չարյանը, Հ. Շիրազը, Դ. Սարյանը և ուրիշներ։

Պատերազմի տարիներին գրիչը զենքով փոխարինեցին Հրաչյա Քոչարն ու Թաթուլ Հուրյանը, Վախթանգ Անանյանն ու Գուրգեն Բորյանը, Հմայակ Սիրասն ու Գարեգին Սևունցը, Սուրեն Այվազյանն ու Գարեգին Բեսը և էլի շատ ուրիշ գրողներ ու ժուռնալիստներ։ Ռազմաճակատում ծնվեցին Սերո Խանզադյանի ռազմական օրագրությունները ու «Մեր գնդի մարդիկ» վեպը։ Պատերազմի բոցերում են ծնվել Համո Սահյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Արսեն Հովհաննիսյանի, Արշալույս Սարոյանի մարտաշունչ բանաստեղծությունները։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հզոր ուժով դրսևորվեց Մարտիրոս Սարյանի նկարչական բարձր արվեստը։ Արվեստի ականավոր գործիչներ Վ. Վաղարշյանը, Հր. Ներսիսյանը, Գ. Ջանիբեկյանը, Վ. Աճեմյանը, Հ. Դանիելյանը, Ա. Ավետիսյանը, Ա. Ոսկանյանը, Յ. Ամերիկյանը, Ա. Գուլակյանը և տասնյակ ուրիշներ պարբերաբար ելույթներ էին ունենում հոսպիտալներում և զորամասերում։ Գրողների, նկարիչների և արտիստների խմբերը մեկնում էին ռազմաճակատի առաջավոր գիծ, իրենց արվեստով խանդավառում հայրենիքի պաշտպաններին, ամրապնդում նրանց հավատը հաղթանակի նկատմամբ։

Մեծ Հայրենականի տարիներին Սովետական Հայաստանի աշխատավորներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին երկրի պաշտպանության ֆոնդի ստեղծմանը։ Հայաստանի թիկունքայինների նյութական միջոցներով կառուցված տանկային շարասյուները՝ «Հայաստանի կոմերիտական» էսկադրիլիան ու «Սովետական Հայաստան» զրահագնացքը ռազմաճակատ մեկնեցին՝ խորհրդանշելով թիկունքի գվարդիականների հայրենանվեր գործերը։ Ճակատային ներն անհուն երախտագիտությամբ էին լցված Հայկական ՍՍՀ-ից ստացած նվեր-ծանրոցների, սաք հագուստի, ջերմ ու սրտաբուխ նամակների համար։

Պատերազմը ոտքի հանեց սփյուռքահայ առաջադեմ ուժերին, լայն ծավալ ստացավ սփյուռքահայ աշխատավորության հայրենասիրական շարժումը, «Սասունցի Դավիթ», գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուների կառուցման համար միջոցների հավաքումը։ Սփյուռքահայերի մասնակցությունը հակաֆաշիստական շարժումներին դրսևորվեց գազափարական և զինված պայքարի, նյութական միջոցների հավաքման և այլ ձևով։

Սովետական Հայաստանի թիկունքի աշխատավորներն իրենց հայրենանվեր գործերով թևավորում էին ռազմաճակատի մարտիկներին։ Կովկասի համար մղված հարձակողական մարտերի նախօրյակին հայ ժողովուրդը նամակով դիմեց ռազմաճակատում մարտնչող իր զավակներին և պատվիրեց՝ անողոքաբար ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին, շարունակ հիշել՝ ռազմաճակատի որ հատվածում էլ կռվելիս լինեք, կռվում եք հարազատ Հայաստանի գոյության, փրկության, ազատության համար։ Նամակը, որ ստորագրել էին ավելի քան 335 հազար մարդ, մեծ ոգևորություն առաջացրեց և նորանոր քաջագործությունների մղեց հայ ռազմիկներին։

Սովետական Հայաստանի թիկունքայինները հոգատարությամբ էին շրջապատում ռազմաճակատում զոհվածների ընտանիքներին, էվակուացիայի ենթարկված անապաստան երեխաներին, վիրավոր ռազմիկներին, ծերերին, անօգնականներին։ Իսկ երբ կարմիր բանակի հարվածների տակ թշնամին ջախջախվելով ետ էր քաշվում իր որջը, մեկը մյուսի ետևից ազատագրվեցին սովետական քաղաքներն ու գյուղերը, եղբայրական օգնություն ցույց տրվեց ազատագրված շրջաններին՝ շուտափույթ բուժելու պատերազմի հասցրած վերքերը։

Պայքարի ելքը վճռվում էր և՛ ռազմաճակատում, և՛ թիկունքում։ Սովետական թիկունքի հաջողությունները, ամենից առաջ՝ ռազմական տնտեսության նվաճումները, հնարավորություն տվեցին չորս տարի շարունակ ռազմաճակատն անխափան ապահովել ռազմական տեխնիկայով, հանդերձանքով և պարենով։ Պատերազմի բոցերում քայլ առ քայլ նվաճվում էր բաղձալի հաղթանակը, իսկ թիկունքում՝ ամրապնդվում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը, սոցիալիստական հասարակարգի քաղաքական, տնտեսական և ռազմական հաջողությունը։

Պատերազմը խիզախության, արիության և մասսայական հերոսության դպրոց էր։ Այն ոչ միայն բանակների ճակատամարտ էր, այլև հասարակական երկու տարբեր սիստեմների, երկու գաղափարախոսությունների՝ բուրժուական և կոմունիստական գաղափարախոսությունների բախում։ Սերունդները ակնածանքով են հիշում և երախտագիտությամբ կփառաբանեն սովետական անսասան թիկունքի մարդկանց աշխատանքային սխրանքները։

Հանրապետության աշխատավորները Լենինգրադի, Ստալինգրադի, Օդեսայի և ավերված այլ քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդին նվիրա-

բերեցին ավելի քան 8 միլիոն ռուբլի, Դոնբասի ձեռնարկություններին ուղարկեցին շուրջ 9500 մեքենաներ, գործիքներ և այլ մասեր։

Սովետական Հայաստանի աշխատավորները՝ հայերը, ռուսները, ադրբեջանցիները, քրդերը և այլ ազգերի ներկայացուցիչները ոչինչ չխնայեցին բաղձալի հաղթանակը արագացնելու համար։

Հայաստանը պատերազմի տարիներին և՛ կառուցում էր, և՛ մարտնչում։ Ժողովրդի աշխատանքային խանդավառությունը կազմակերպում, ուս և ուղղություն էր տալիս Հայաստանի կոմունիստական կուսակցությունը։

3

Անհնար է որևէ բանի հետ համեմատել, որևէ չափի ու կշռի տակ դնել այն կերուստները, որ պատերազմը պատճառեց սովետական ժողովրդին։ Բայց կորուստներից մեծագույնը երազներով, սիրով, ապագայի տենչերով լի այն բյուրավոր երիտասարդ կյանքերն էին, որ մեկընդմիշտ մարեցին պատերազմի դաժան օրենքով։ Քաղաքները վերականգնվեցին, մոխիրներից հառնեցին նորաշեն գյուղերն ու ավանները, մարդիկ ազնիվ աշխատանքով նյութական նորանոր բարիքներ ստեղծեցին, բայց կորուստներից մեծագույնը՝ 20 միլիոն սովետական մարդկանց կորուստը, մնաց անհատույց։ Պատմական մեծ հաղթանակը ամբողջ աշխարհին համոզիչ կերպով ապացուցեց սովետական պետական ու հասարակական կարգերի, սովետական զինված ուժերի, կոմունիստական գաղափարախոսության կենսունակությունն ու անպարտելիությունը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու հայրենասիրության, հումանիզմի, սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնության հզոր ուժը, կոմունիստական կուսակցության առաջատար դերը, կազմակերպչական մեծ տաղանդը։

Չորս տասնամյակ է անցել մեծ Հայրենականի հաղթական ավարտից։ Աշխարհում շատ տեղաշարժեր են կատարվել, սոցիալիզմի համաշխարհային սիստեմը նոր, փառավոր հաղթանակներ է տարել։ Սովետական ժողովուրդը իր մարտական ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հզորացրել է մեր հայրենիքի ռազմատնտեսական, քաղաքական պոտենցիալը, հաջողությամբ իրականացվել են հնգամյակները, ամրապնդվել է կոմունիզմի նյութատեխնիկական բազան։

Ետպատերազմյան չորս տասնամյակների ընթացքում լիովին կերպարանափոխվել է Սովետական Հայաստանը՝ ՍՍՀՄ բազմազգ մեծ ընտանիքի իրավահավասար անդամը։ Արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի զարգացման, հեղափոխական ավանդույթների, ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ֆաշիզմի ջախջախման գործում ունեցած մեծ ծառայությունների համար Սովետական Հայաստանը պարգևատրվել է Լենինի երեք, Հոկտեմբերյան հեղափոխության և ժողովուրդների բարեկամության շքանշաններով։ Լենինի շքանշանով պարգևատրվել է Երևանը, իսկ Լենինականը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Հայաստանը դարձել է կարմիր դրոշակակիր։ Հաջողությամբ կենսագործվում են 11-րդ հնգամյակի հոյակապ ծրագրերը։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային իմաստուն քաղաքականության մի նոր, վառ դրսևորումն էր կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության վերջերս ընդունած որոշումը՝ 1986—1990 թթ. Երևանի քաղաքային տնտեսության հետագա զարգացման մասին։ Դա ծրագրային մեծ որոշում է, հայ ժողովրդի նկատմամբ հայրական հոգատարության առհավատչյա։ Ի պատասխան այդ որոշման, երևանցիները, ամբողջ հայ ժողովուրդն իրենց անհուն երախտագիտությունն են արտահայտում հարազատ կուսակցությանն ու կառավարությանը, միահամուռ պատրաստակամություն հայտնում աշխատել ավելի եռանդով, անշեղորեն կենսագործել ՍՄԿԿ XXVI համագումարի և Կենտկոմի ետհամագումարյան պլենումների որոշումները, արժանավայել դիմավորել ՍՄԿԿ XXVII համագումարը։